ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ

2-րդ եռամսյակի

Միջանկյալ հաշվետվություն

ՀՀ, 0025, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5

հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ՝ unibank@unibank.am

Ինտերնետային կայք՝ www.unibank.am

Եռամսյակի Հաշվետվություն թիվ 02, 11.08.2020թ.

Երևան 2020

Բանկի Վարչության հայտարարությունը

Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն Բանկի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

Մեսրոպ Հակոբյան	**Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն**		11.08.2020թ
Արարատ Ղուկասյան	**Վարչության նախագահի առաջին տեղակալ**		11.08.2020թ
Գոհար Գրիգորյան	**Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ**		11.08.2020թ
Օվսաննա Առաքելյան	**Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետբերման գծով տնօրեն**		11.08.2020թ
Դավիթ Պետրոսյան	**Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**		11.08.2020թ
Գուրգեն Ղուկասյան	**Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն**		11.08.2020թ
Արթուր Ապերյան	**Վարչության անդամ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի տնօրեն**		11.08.2020թ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական վիճակի մասին

« 30 » ՀՈՒՆԻՍԻ 2020թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջանի վերջի դրությամբ 30.06.2020	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) 31.12.2019
1	**Ակտիվներ**			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	31,458,262	49,575,707
1.2	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	15,170,668	23,298,518
1.3	Ածանցյալ ֆինանասական ակտիվներ	14.1	19,614	912
1.4	Հաճախորդներին տրված վարկեր և այլ	16	148,765,949	141,401,217
1.5	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	2,530,202	3,353,992
1.6	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	18	14,381,532	14,416,575
1.7	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	11,636,386	11,471,386
1.8	Հետաձգված հարկային ակտիվներ	11		
1.9	Կանխավճար շահութահարկի գծով	21.1	170,146	
1.10	Այլ ակտիվներ	21	5,828,754	5,497,108
	Ընդամենը՝ ակտիվներ		**229,961,513**	**249,015,415**
2	**Պարտավորություններ**			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	24,029,566	7,387,238
2.2	Ածանցյալ ֆինանասական պարտավորություններ	22.1	2,774	21,150
2.3	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	152,455,044	189,738,550
2.4	Փոխառություն	23.1	5,971,584	5,907,632
2.5	Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	24	9,316,370	9,523,655
2.6	Ընթացիկ հարկի գծով պարտավորություն	27.2	85,438	305,561
2.7	Հետաձգված հարկային պարտավորություններ	11	281,041	298,151
2.8	Այլ պարտավորություններ	27	3,533,256	2,007,732
	Ընդամենը՝ պարտավորություններ		**195,675,073**	**215,189,669**
3	**Կապիտալ**			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	20,489,652	20,489,653
3.2	Էմիսիոն եկամուտ		9,605,639	9,605,638
3.3	Պահուստներ՝		2,054,521	2,012,631
3.3.1	Գլխավոր պահուստ		608,509	508,876
3.3.2	Վերագնահատման պահուստներ		1,446,012	1,503,755
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)		2,136,628	1,717,824
3.5	Կապիտալի այլ տարրեր			
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	Ընդամենը՝ կապիտալ		34,286,440	33,825,746
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		229,961,513	249,015,415

Բանկի վարչության նախագահ (գործադիր տնօրեն) ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.2020թ.

Կ.Տ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական արդյունքների մասին

« 30 » ՀՈՒՆԻՍԻ 2020թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթա-գրու-թյուններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան 01.04.20_30.06.20	Հաշվետու ժամանակա-շրջան 01.01.20_30.06.20	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան (ստուգված) 01.04.19_30.06.19	Նախորդ ժամանակաշրջան 01.01.19_30.06.19 (ստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	4,103,933	9,023,487	4,763,319	9,538,573
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(2,350,337)	(4,761,930)	(2,317,510)	(4,602,852)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		1,753,596	4,261,557	2,445,809	4,935,721
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	1,036,038	1,522,064	714,249	1,347,076
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(128,684)	(298,075)	(134,319)	(273,268)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		907,354	1,223,989	579,930	1,073,808
Եկամուտ շահաբաժիններից					
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	614,171	1,235,395	394,847	695,009
Այլ գործառնական եկամուտներ	6	137,632	312,028	247,913	407,992
Գործառնական եկամուտներ		3,412,753	7,032,969	3,668,499	7,112,530
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(1,042,683)	(2,155,094)	(1,162,828)	(2,336,487)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(952,830)	(2,080,075)	(1,054,730)	(2,125,732)
Այլ գործառնական ծախսեր	9	(1,030,764)	(2,186,236)	(1,035,358)	(2,054,951)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10				
Շահույթը/(վնասը) մինչև հարկումը		386,476	611,564	415,583	595,360
Շահութահարկի գծով ծախս (վերադարձում)	11	(49,488)	(93,127)	(26,059)	(62,165)
Շահույթը (վնասը) հարկումից հետո		336,988	518,437	389,524	533,195
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	12				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	12				
Ժամանակաշրջանի զուտ շահույթ					
Այդ թվում՝					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Բանկի վարչության նախագահ (գործադիր տնօրեն) _____ ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ _____ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.07.2020թ.

ՀԱՍ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО "ЮНИБАНК"
OPEN JOINT-STOCK COMPANY "UNIBANK"
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН * RA YEREVAN
02559077

ՍԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

« 30 » ՀՈՒՆԻՍԻ 2020թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53.

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան 01.01.20_31.03.20	Նախորդ ժամանակաշրջան 01.01.19_31.03.19
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	(72,179)	3,323
Դրամական հոսքերի հեջավորում		
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ		(28,773)
Այլ համապարփակ եկամուտի գծով շահութահարկ	14,436	5,090
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	**(57,743)**	**(20,360)**
Համապարփակ ֆինանսական արդյունք	**460,694**	**512,835**
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		

Բանկի վարչության նախագահ ՍԵՄՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ

(գործադիր տնօրեն)

Գլխավոր հաշվապահ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.07.2020թ.

ԿՏ

ՍԻՆՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

« 30 » ՀՈՒՆԻՍԻ 2020թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(դրամ դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Հանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/մնաց	Պահուստներ	Փոխարժեքային տարբերություններից ծագած եղբայրակցությունների	Իրական արժեքով չհաշվառվող ֆինանսական գործիքների վերագնահատումից	Դեպոզիտային հիմնադրամի	Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատման օգուտներ	Հաշվետու շրջանի	Սեփական բաժնետոմսերի	Ընդհանրացված եկամուտ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
	Կանոնադրական կապիտալ	Հետ գնված բաժնետոմս	Ընդամենը											
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I եռամսյակ)														
1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2019 թ. (ստուգված/չստուգված)	20,489,653	-	20,489,653	9,605,638	448,298	-	(255,830)	-	1,495,348	765,337	-	-	-	32,548,444
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և նական սխալների ճշգրտումը														
2. Վերահաշվարկված մնացորդը	20,489,653	-	20,489,653	9,605,638	448,298	-	(255,830)	-	1,495,348	765,337	-	-	-	32,548,444
3. Բաժնեկալներով (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝														-
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ														-
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին														-
4. Համապարիակ եկամուտ														
5. Շահութաբաժիններ										(1,807)				(1,807)
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝														-
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում														-
7. Ներքին շարժեր, այդ թվում՝					60,578		2,658		(23,018)	472,617				512,835
7.1. Մասհանումներ զլխավոր պահուստին					60,578					(60,578)				-
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում														-
7.3. Եմիսիոն վնասի ծածկում														-
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժերի աճի նվազում									(23,018)					(23,018)
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							2,658			533,195				535,853
8. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30 Հունիսի 2019թ.. (ստուգված/չստուգված)	20,489,653	-	20,489,653	9,605,638	508,876	-	(253,172)	-	1,472,330	1,236,147	-	-	-	33,059,472

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից ածողական) (II այլուսակ)														
9. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2020 թ. (ստուգված/չստուգված)	20,489,653	-	20,489,653	9,605,638	508,876	-	52,872	-	1,450,883	1,717,824	-	-	-	33,825,746
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը														
10.Վերահաշվարկված մնացորդը	20,489,653	-	20,489,653	9,605,638	508,876	-	52,872	-	1,450,883	1,717,824	-	-	-	33,825,746
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝														-
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ														-
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին														-
12. Այլ համապարփակ եկամուտ														-
13. Շահութաբաժիններ														-
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝														-
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում														-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝					99,634		(57,743)		-	418,803				460,694
15.1. Մասհանումներ զլխավոր պահուստին					99,634					(99,634)				-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում														-
15.3. Եմիսիոն վնասի ծածկում														-
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ/նվազում									-					-
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							(57,743)			518,437				460,694
16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 Հունիսի 2020թ.	20,489,653	-	20,489,653	9,605,638	608,510	-	(4,871)	-	1,450,883	2,136,627	-	-	-	34,286,440

Հաշվետվությունը հաստատվել է տնօրենի կողմից 14.07.2020թ.

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն)
Գլխավոր հաշվապահ

ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 30 » ՀՈՒՆԻՍ 2020թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	Նախորդ ժամանակաշրջան 30.06.2019	Հաշվետու ժամանակաշրջան 30.06.2020
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		**4,624,815**	**3,213,519**
Ստացված տոկոսներ		8,873,531	5,506,096
Վճարված տոկոսներ		(4,532,643)	(4,744,560)
Ստացված կոմիսիոն գումարներ		1,389,021	3,463,039
Վճարված կոմիսիոն գումարներ		(273,268)	(298,075)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		667,519	489,653
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)		630,749	956,252
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		1,186,750	1,133,294
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(2,062,351)	(1,983,289)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(1,254,493)	(1,308,891)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		**3,506,056**	**(34,801,111)**
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(4,597,720)	(11,912,891)
այդ թվում՝ վարկերի և փոխատվությունների նվազում/ (ավելացում)		(4,998,326)	(12,882,599)
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		419,406	897,094
Ֆինանսական վարձակալության զծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)			-
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)		(18,800)	72,614
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		8,103,776	(22,888,220)
այդ թվում՝ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)		10,349,834	(22,763,595)
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		(2,246,058)	(124,625)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		**8,130,871**	**(31,587,592)**
Վճարված շահութահարկ		(202,737)	(209,103)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		**7,928,134**	**(31,796,695)**
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)		(997,819)	(138,851)
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)		(2,000,321)	8,652,438
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		(183,839)	(191,023)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(225,879)	(248,610)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		46,070	(14,307)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		(298,614)	220,586
Զուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		**(3,660,402)**	**8,280,233**
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		x	x
Վճարված շահաբաժիններ		(224,070)	-
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(256,716)	(235,049)
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		3,500,000	6,029,500
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)			(519,288)
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		422,022	(207,285)
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում			
Ֆինանսական վարձակալության զծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)			
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից			
Զուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		**3,441,236**	**5,067,878**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(89,414)	331,139
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**7,619,554**	**(18,117,445)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	13_2	32,049,007	49,575,707
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	13_2	39,668,561	31,458,262

Բանկի վարչության նախագահ (գործադիր տնօրեն) ՄԵՍՐՈՊ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հաշվետվությունները հաստատվել են _14.07.2020թ.

Յունիբանկ ԲԲԸ-ի կառավարման մարմինների միջանկյալ զեկույցը ներկայացնում է՝

- Բանկի բիզնես արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը
- Բանկի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար
- Հաշվետու ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը

Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

Բացարձակ արժեքով ներկայացված ցուցանիշներն արտահայտված են հազ. ՀՀ դրամով:

Ցուցանիշի անվանումը	2016թ. (աուդիտ անցած)	2017թ. (աուդիտ անցած)	2018թ. (աուդիտ անցած)	2019թ. (աուդիտ անցած)	2020թ. 1-ին եռամսյակ (աուդիտ չանցած)	2020թ. 2-րդ եռամսյակ (աուդիտ չանցած)
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-443,218	67,602	931,297	1,326,981	181,449	518,437
Սեփական կապիտալի միջին մեծություն	29,704,263	35,334,279	33,176,713	33,165,728	33,897,671	34,027,261
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	-1.5%	0.2%	2.8%	4.0%	2.2%	3.1%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-443,218	67,602	931,297	1,326,981	181,449	518,437
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	174,248,544	191,844,966	199,485,446	226,843,697	244,961,383	239,961,426
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	-0.3%	0.0%	0.5%	0.6%	0.3%	0.4%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-443,218	67,602	931,297	1,326,981	181,449	518,437
Գործառնական եկամուտ	10,831,503	13,454,274	14,762,553	14,502,166	3,620,216	7,032,969
Զուտ շահույթի մարժա (NPM), %	-4.1%	0.5%	6.3%	9.2%	5.0%	7.4%
Գործառնական եկամուտ	10,831,503	13,454,274	14,762,553	14,502,166	3,620,216	7,032,969
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	174,248,544	191,844,966	199,485,446	226,843,697	244,961,383	239,961,426
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	6.2%	7.0%	7.4%	6.4%	5.9%	5.9%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	174,248,544	191,844,966	199,485,446	226,843,697	244,961,383	239,961,426
Սեփական կապիտալի միջին մեծություն	29,704,263	35,334,279	33,176,713	33,165,728	33,897,671	34,027,261
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	5.87	5.43	6.01	6.84	7.23	7.05
Զուտ տոկոսային եկամուտ	8,361,044	10,491,356	10,518,060	10,136,153	2,507,961	4,261,557
Եկամտաբեր ակտիվների	131,429,702	148,972,966	151,855,857	167,324,156	180,158,372	179,911,025

միջին մեծություն						
Զուտ տոկոսային մարժա (NIM)	6.4%	7.0%	6.9%	6.1%	5.6%	4.8%
Տոկոսային եկամուտ	21,329,971	22,296,742	20,008,220	19,469,982	4,919,554	9,023,487
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	131,429,702	148,972,966	151,855,857	167,324,156	180,158,372	179,911,025
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	16.2%	15.0%	13.2%	11.6%	11.0%	10.1%
Տոկոսային ծախսեր	12,968,927	11,805,386	9,490,160	9,333,829	2,411,593	4,761,930
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	142,975,618	154,817,860	164,735,879	191,193,293	208,412,078	202,865,573
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	9.1%	7.6%	5.8%	4.9%	4.7%	4.7%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	-443,218	67,602	931,297	1,326,981	181,449	518,437
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	163,963,708	203,732,963	204,896,525	204,896,525	204,896,525	204,896,525
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-2.7	0.3	4.5	6.5	0.9	2.5
Սպրեդ	7.2%	7.3%	7.4%	6.8%	6.3%	5.4%

Ակտիվները կազմել են 230.0 մլրդ դրամ՝ նվազելով 19 մլրդ դրամով՝ նախորդ ֆինանսական տարվա վերջի ցուցանիշի համեմատ:Վարկային ներդրումները կազմել են 148.8 մլրդ դրամ, կամ ընդհանուր ակտիվների 64.7%-ը: Պարտավորությունների ծավալը կազմել է 195.7 մլրդ դրամ՝ նվազելով 19.5 մլրդ դրամով նախորդ ֆինանսական տարվա վերջի ցուցանիշի համեմատ:

Պարտավորությունները հաճախորդների նկատմամբ կազմել են 152.5 մլրդ դրամ՝ նվազելով 37.3 մլրդ դրամով նախորդ տարվա վերջին ցուցանիշի համեմատ: Վերջինս հիմնականում նվազել է իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ միջոցների նվազման հաշվին:

Բանկի կապիտալը

Կապիտալի համարժեքության նորմատիվը 2020թ. հունիսին կազմել է 14.84%՝ 2020թ. մարտի համեմատ ավելանալով 0.86 տոկոսային կետով, ռիսկով կշռված ակտիվների նվազման հաշվին: Կապիտալի համարժեքության ցուցանիշը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն մակարդակը (12%): 30.06.2020թ. դրությամբ նորմատիվային կապիտալը կազմել է 30.4 մլրդ. դրամ:

Զուտ շահույթը 6 ամիսների արդյունքներով կազմել է 518,437 հազ ՀՀ դրամ:

Մանրածախ բիզնես

Մանրածախ բիզնեսում Բանկի աշխատանքն ուղղված էր գործիքակազմի կատարելագործմանը, բիզնես գործընթացների օպտիմալացմանը, հաճախորդների հետ հետադարձ կապի ուժեղացման միջոցով սպասարկման որակի բարձրացմանը:

Վարկավորման տոկոսադրույքի նվազեցման ուղղությամբ կենտրոնական բանկի քաղաքականության շրջանակներում Բանկն առաջարկել է հաճախորդներին առավել գրավիչ պայմաններ: Կայուն աճ արձանագրվել է ապրանքների և կենցաղային տեխնիկայի ձեռքբերման համար սպառողական վարկերի, ոսկու գրավով վարկերի գծով:

Բանկը շարունակել է ֆինանսավորման արժեքի նվազեցման քաղաքականությունը՝ ժամկետային ավանդների համար սահմանելով չափավոր տոկոսադրույքներ:

Կորպորատիվ բիզնես

Միկրո և փոքր բիզնեսի զարգացման ռազմավարությանը համահունչ, 2020թ. 2-րդ եռամսյակի ընթացքում Յունիբանկը շարունակել է ակտիվ քայլերը՝ նպատակաուղղված հիշյալ սեգմենտի համար վարկային միջոցների հասանելիության բարձրացմանը: Կենտրոնանալով թիրախային սեգմենտների վրա՝ կորպորատիվ բիզնեսի ստորաբաժանման ջանքերն ակտիվորեն ուղղված էին շինարարության, սպասարկման ոլորտների, այդ թվում հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի ֆինանասավորմանը:

Սպասարկման ցանց, հաճախորդային բազա

30.06.2020թ-ի դրությամբ Յունիբանկի սպասարկման ցանցը ներառում էր 51 մասնաճյուղ Հայաստանում և Արցախում, 93 պրոմո կետ, 125 բանկոմատ, 142 վճարային տերմինալ: Մոսկվայում գործում է Բանկի ներկայացուցչությունը, որն օժանդակում է օտարերկրյա հաճախորդների ներգրավմանը:
Տարվա ընթացքում Բանկը սպասարկել է ավելի քան 336,000 հաճախորդների:
Դրամական փոխանցումների սպասարկման ոլորտում շարունակվում է նկատվել ծավալների չնչին փոփոխություն, ինչը պայմանավորված է բանկի միջոցով ստացվող ֆիզիկական անձանց միջազգային ոչ առևտրային փոխանցումների համանման ծավալներով:

2020թ. ռազմավարական առաջնահերթությունները

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում, ինչպես նաև վերջին ամիսների իրադարձությունները հանգեցրել են Բանկի հետագա զարգացման խնդիրներն ու

առաջնահերթությունները, և Բանկի ղեկավարությունը վերանայում է տարեկան կանխատեսումները՝ վերլուծելով Յունիբանկի զարգացման տարբեր սցենարներ:
Քաղաքացիների և բիզնեսի օժանդակությանը միտված քայլերի շրջանակում Յունիբանկը մասնակցում է կառավարության՝ փոքր և միջին բիզնեսի խթանման, սոցիալական աջակցության նպաստների վճարման ծրագրերին, վարկերի գծով մարումների հետաձգման հնարավորության տրամադրմանը, վարկերի վերակառուցման հնարավորությանը, հաճախորդների հետ անմիջական շփումն առավելագույնս սահմանափակելու նպատակով ներդրվել է մոբայլ բանկինգի համակարգին հեռավար միացման հնարավորություն:
Յունիբանկի կողմից հաստատված ռազմավարության շրջանակներում սահմանվել են 2020թ. զարգազման հետևյալ առանցքային առաջնահերթությունները՝

- Տեխնոլոգիական կատարելագործում, թվային հարթակի վաճառքի զարգացում,
- Վարկավորման բնագավառում արհեստական բանականության տեխնոլոգիաների հետագա զարգացում,
- Հաճախորդահեն մոտեցման զարգացում և հաճախորդների պահանջմունքների խորը վերլուծության հիման վրա՝ սպասարկման և գործիքակազմի ձևավորում նաև նրանց կոնտրագենտների համար
- Յունիբանկի ֆինանսական արդյունավետության և դիրքերի բարելավման ապահովում բանկային համակարգում, Բանկի ներդրումային գրավչության բարձրացում:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած
կարևոր դեպքերի նկարագիրը

Այսօր Յունիբանկը ունիվերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկի Խորհրդի մշակած ռազմավարությանը համապատասխան Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններն են մանրածախ բիզնեսը և աջակցությունը փոքր և միջին ձեռնարկատիրությանը:

ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ և ԱՐԺԵՔՆԵՐԸ

Յունիբանկը դինամիկ զարգացող ինովացիոն բանկ է, որն իր հաճախորդներին տրամադրում է մանրածախ և կորպորատիվ բանկային ծառայությունների լայն տեսականի:

Բանկն իր առաքելությունն է համարում նպաստել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը, իր հաճախորդների, բաժնետերերի և գործընկերների ֆինանսական վիճակի բարելավմանը, ինչպես նաև՝ որակյալ ֆինանսական ծառայությունների նկատմամբ հասարակության պահանջարկի բավարարմանը:

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

- ուշադիր և ազնիվ վերաբերմունք հաճախորդների նկատմամբ
- ուժեղ թիմ և արդյունքին նպատակաուղղվածություն
- հասարակության վստահություն
- ապրանքանիշի բարձր ճանաչելիություն և հեղինակություն
- հուսալիություն և կայունություն

ՄԵՆՔ ԶԳՏՈՒՄ ԵՆՔ

- ամրապնդել և ընդլայնել բանկի դիրքերը ֆինանսական շուկայում

- ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ և կատարելագործել սպասարկման գործընթացը
- բարձրացնել պահանջված բանկային ծառայությունների հասանելիության մակարդակը
- ներդնել բիզնեսի վարման թափանցիկ մոդելի և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը
- բարձրացնել բանկի ներդրումային գրավչություն

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական պատասխանատվության սկզբունքներին համաձայն Յունիբանկը մշտապես ամենագործուն մասնակցությունն է ցուցաբերում երկրի հասարակական կյանքում՝ իր ուժերն ուղղորդելով ենթակառուցվածքների զարգացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Յունիբանկը տնտեսական և սոցիալական ծրագրերի պատասխանատու մասնակից է: Բանկն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում բարեգործական և հովանավորչական ծրագրերում, որոնք ուղղված են կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, ինչպես նաև բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացմանը:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԷԹԻԿԱ

Բանկում փոխգործակցությունը կառուցված է անհատի հարգանքի և արդյունքին հասնելու հիման վրա՝ նպատակ ունենալով հաջող կերպով լուծելու մասնագիտական խնդիրները և պահպանելու կառուցողական հարաբերությունները անձնակազմում: Մենք աշխատում ենք համապատասխանել գործարար էթիկայի սկզբունքներին, պահպանելով գործող օրենքները, ինչպես նաև բանկում սահմանված նորմերն ու կանոնները:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է հետևել շրջակա միջավայրի պաշտպանության սկզբունքներին: Վարկավորման ծրագրերի իրականացման ժամանակ բանկը հաշվի է առնում շրջակա միջավայրի պաշտպանության ստանդարտների համապատասխանության փաստը և նախապատվություն է տալիս էկոլոգիապես մաքուր ապրանքների արտադրությանն ու ռեսուրսախնայող գործունեություն իրականացնող ծրագրերի վարկավորմանը: Բանկն իր գործունեության ընթացքում ձգտում է նվազագույնի հասցնել այն նախագծերի ֆինանսավորումը, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել շրջակա միջավայրի վրա:

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում հատկապես կարևոր է խստագույնս պահպանել անվտանգության կանոնները, UniMobile հավելվածը հնարավորություն է տալիս իրականացնել մի շարք գործողություններ առանց բանկ այցելելու:

Յունիբանկը թարմացրել է անգրավ սպառողական վարկերի սքորինգային համակարգը /վարկարժանության գնահատական/՝ ներդնելով արհեստական բանականության տեխնոլոգիան: Արհեստական բանականության տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ավելի արագ և որակյալ մշակել մեծ ծավալի տեղեկատվություն, վերլուծել հաճախորդների տվյալները և ավելի մեծ ճշգրտությամբ կառուցել նրանց պրոֆիլը: Արդյունքում բանկը, խնայելով ժամանակը և միջոցները, կկարողանա էլ ավելի օպտիմալացնել վարկերի գծով որոշումների ընդունման գործընթացը, բարձրացնել ռիսկերի գնահատման որակը և բարելավել բարեխիղճ հաճախորդների սպասարկումը՝ նրանց առաջարկելով վարկավորման ավելի լավ պայմաններ:

2019թ.-ին Յունիբանկի վարկային կոնվեյերը մշակեց ավելի քան 480 հազար վարկային հայտ՝ հաճախորդին պատասխանը տրամադրելով գրեթե մեկ րոպեում:«Արհեստական բանականության տեխնոլոգիայի ներդրմամբ Յունիբանկը քայլ կատարեց դեպի նոր թվային իրականություն: Սքորինգի նոր մոդելը հնարավորություն կտա ակտիվ տեմպերով զարգացնել և ընդլայնել մասսայական վարկավորումը՝ էապես կրճատելով ծախսերը և բարձրացնելով հաճախորդների լոյալությունը: McKinsey -ի ուսումնասիրության արդյունքներով, այն վարկային կազմակերպություններում, որոնք օգտագործում են արհեստական բանականության տեխնոլոգիան, cost-to-income–ը 12 տոկոսային կետով ցածր է միջին շուկայական ցուցանիշից: «Յունիբանկը մանրածախ շուկայի առաջատարներից է: Հաճախորդների սպասարկման գործընթացն ավելի հարմարավետ դարձնելու նպատակով, EasyPay վճարահաշվարկային ընկերությունը և Յունիբանկն ընդլայնեցին համագործակցությունը: Այսուհետ Յունիբանկի հաճախորդները կարող են իրականացնել վարկի մարումներ և փոխանցումներ իրենց բանկային հաշիվներին EasyPay-ի ավելի քան 2000 տերմինալներով և Easywallet հավելվածով: Բոլոր վճարումներն կատարվում են օնլայն ռեժիմում՝ հաշված րոպեների ընթացքում:Ընկերությունների միջև համագործակցության ընդլայնումը հնարավորություն է տալիս հաճախորդներին առաջարկելու վճարման ևս մեկ՝ հարմար և արագ տարբերակ, նվազեցնելով կանխիկի հետ շփումը:

Ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև անհատ ձեռներեցների համար 15.05.2020.թ-ից մինչև 31.08.2020թ. ներառյալ ժամանակահատվածում «Բանկ - հաճախորդ» համակարգի տեղադրման, ուսուցման և սպասարկման համար «Սակագներ և դրույքաչափեր»-ի փաստաթղթի 3.2.1. և 3.2.2. կետերով սահմանված սակագները չեն գործի:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ իրավիճակը՝ «Յունիբանկ» ԲԲԸ-ն արդեն իսկ որոշում էր կայացրել վարկառուների համար մինչև 2020թ-ի ապրիլի 14-ը սահմանել վարկերի մարման ազատ գրաֆիկ, առանց ժամկետանցների դասակարգման, տույժերի և տուգանքների կիրառման: Ղեկավարվելով համաճարակի երկարաժամկետ հետևանքները մեր հաճախորդների համար հարթելու մղումով՝ Բանկի կողմից կայացվել է որոշում երկարաձգել վարկերի մարման ազատ գրաֆիկի ժամկետը մինչև սույն թվականի օգոստոսի 31-ը, որից հետո իր հաճախորդների վարկերի մարման ժամանակացույցերում կատարել հետևյալ փոփոխությունները:

ՀՀ Կառավարության կողմից հաստատված՝ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին օժանդակելու միջոցառումների ծրագրերի շրջանակներում Յունիբանկը շարունակում է վարկավորման դիմումների ընդունումը ևս:

Հունիսի 29-ին, Zoom հավելվածի միջոցով կայացավ «Յունիբանկ» ԲԲԸ-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որում ամփոփվեցին բանկի 2019թ.ի արդյունքները և ներկայացվեցին զարգացման հիմնական ուղղությունները:

2019թ.-ը բանկի համար տրանզակցիոն բիզնեսի զարգացման տարի էր: Հաճախորդների արտաքին տնտեսական գործունեության զարգացմանն օժանդակելու նպատակով, թղթակցային հարաբերություններ են հաստատվել արտասահմանյան մի շարք բանկերի, այդ թվում՝ Landesbank Baden-ի (Գերմանիա), Banca Popolare di Sondrio-ի (Իտալիա),Տրանսկապիտալբանկի (Ռուսաստան) հետ:Սոցիալական պատասխանատվության շրջանակում Յունիբանկը շարունակել է սահմանամերձ դպրոցներին իր աջակցության ծրագիրը՝ նպաստելով կրթության որակի

բարելավմանը:Հաշվի առնելով Յունիբանկի 2019թ. ֆինանսական գործունեության արդյունքները, ժողովում որոշում կայացվեց սովորական անվանական բաժնետոմսերի գծով տարեկան շահութաբաժիններ չվճարել և 1.326.981 հազ. ՀՀ դրամի չափով զուտ շահույթն ուղղել բանկի հեռանկարային զարգացմանը, գլխավոր պահուստին հատկացնել 5%:

Հավատարիմ մնալով իր վարկային քաղաքականությանը՝ Բանկը շարունակել է դիվերսիֆիկացնել իր վարկային պորտֆելը՝ մեծացնելով մանրածախ վարկերի և ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում: Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս Բանկը վարել է պահպանողական քաղաքականություն, հիմնականում ակտիվները կարճաժամկետ տեղաբաշխվել են համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում: Այս նպատակով Բանկը պարբերաբար կատարել է տնտեսության ճյուղերի վերլուծություն, ինչպես նաև ՓՄՁ-ի գծով պլանային ցուցանիշները կատարելու նպատակով իրականացվել են ՓՄՁ վարկավորման գծով սքորինգային մոդելի մշակում, ՓՄՁ վարկային հայտերի հաստատման ավտոմատացում, ՓՄՁ վարկավորման գծով աշխատակիցների որակավորման բարձրացում:

Վինտաժային վերլուծությունները, ստրես տեստավորումները, ներքին և արտաքին աուդիտի կողմից կատարվող ստուգումները թույլ են տալիս ժամանակին բացահայտելու և կառավարելու Բանկին բնորոշ ֆինանսական և գործառնական ռիսկերը:

Բանկի կանոնադրական կապիտալը 2020թ. Հունիսի 30-ի դրությամբ կազմում է 20,489,652,500 ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 172,886,525 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով և 32,010,000 հատ արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի կանոնադրական կապիտալը արտահայտված է ՀՀ դրամով:

Ռիսկերի կառավարումը Յունիբանկի կառավարման համակարգի կարևորագույն մաս է կազմում: Յունիբանկում ռիսկերի կառավարումն իրենից ներկայացնում է Բանկի պոտենցիալ վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված փոխկապակցված գործողությունների համակողմանի համակարգ: Ռիսկերի կառավարման հիմնական նպատակն այն է, որ Յունիբանկը կարողանա իր ռիսկերի գումարային մեծությունը պահպանել Բանկի ռազմավարական ծրագրով սահմանված ռիսկերի մակարդակի վրա և բարձրացնել Բանկի կապիտալի եկամտաբերությունը:

Յունիբանկում ռիսկերի կառավարման համակարգն առաջնորդվում է ՀՀ օրենքներով, ՀՀ ԿԲ օրենքներով և նորմատիվ ակտերով, կանոնակարգերով, Բազելյան կոմիտեի համապատասխան փաստաթղթերով, Ռիսկերի Կառավարման Համընդհանուր Սկզբունքներով / Generally Accepted Risk Principles – GARP/, ինչպես նաև հնարավոր է օգտագործվեն Բանկի կողմից ընդունված գնահատման և վերլուծության համար սեփական մեթոդներ, ցուցանիշներ և կառավարման գործիքներ: Ռիսկերի կառավարումն իրականացվում է ռիսկերի նույնականացման, չափման և մոնիթորինգի շարունակական գործընթացի միջոցով՝ ռիսկերի սահմանաչափերի և հսկողության այլ միջոցների պահպանմամբ: Ռիսկերի կառավարման գործընթացը ծայրաստիճան կարևոր է Բանկի շահութաբերության պահպանման համար, և Բանկում աշխատող յուրաքանչյուր անձ պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի համար: Բանկը խրախուսում է ռիսկերի կառավարմանն առնչվող գիտելիքների մակարդակի բարձրացմանը նպաստող մշակույթի ձևավորումը՝ մասնավորապես համապատասխան սեմինարների կազմակերպման միջոցով:

Իր գործունեության ընթացքում Բանկը ենթարկվում է մի շարք ֆինանսական ռիսկերի, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համադրության որոշ աստիճանի վերլուծություն, գնահատում, ստանձնում և կառավարում:

Վարկային ռիսկ է համարվում վարկառուի կողմից ստանձնած վարկային պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման և վերջինիս արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ սահմանելով մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ճյուղային կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր:

Շուկայական ռիսկ է համարվում շուկայական գործոնների (արտարժույթի փոխարժեք, տոկոսադրույքներ) փոփոխությամբ պայմանավորված Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Իրացվելիության ռիսկ է համարվում Բանկի կողմից իր պարտատերերի օրինական պահանջները ճիշտ ժամանակին չբավարարման խնդիրների ի հայտ գալու և վերջինիս արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Կապիտալի համարժեքության ռիսկ է համարվում ռիսկով կշռված ակտիվների և/կամ ընդհանուր կապիտալի տարրերի փոփոխման պարագայում Բանկի կապիտալի անբավարարության (ոչ համարժեքության) հավանականությունը:

Գործառնական ռիսկ է համարվում Բանկի ներքին կազմակերպչական և/կամ բիզնես գործընթացների խափանման (անձնակազմի ոչ համարժեք կամ ոչ կանոնակարգային գործողություններ, դիտավորությամբ կատարված կամ ոչ միտումնավոր գործարքային սխալներ, գործառնական համակարգերի կամ տեխնոլոգիական բնույթի այլ խափանումներ) կամ տեխնածին բնույթի արտաքին գործոնների ազդեցության արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Իրավական ռիսկ է համարվում Բանկի ներքին իրավական ակտերի, կիրառվող բիզնես գործընթացների, գործիքների, գործարքների, ինչպես նաև վերջիններս կարգավորող պայմանագրերի գործող օրենսդրությանը չհամապատասխանելու և դրա արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Համբավի (հեղինակության) ռիսկ է համարվում հանրության բացասական կարծիքի հետևանքով Բանկի կողմից իր գործող կամ պոտենցիալ հաճախորդներին, գործընկերներին կորցնելու կամ վերջիններիս հետ իրականացվող գործարքների/գործառնությունների ծավալի նվազման հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի համար ֆինանսական կորուստների և/կամ իրացվելիության խնդիրների:

Ռազմավարական (բիզնես մոդելի) ռիսկ է համարվում Բանկի կողմից ոչ իրատեսական (անհամապատասխան) ռազմավարության ընտրության, ինչպես նաև ընտրված ռազմավարության հիմքում ընկած ենթադրությունների, ցուցանիշների, նպատակների և/կամ այլ գործոնների բացասական փոփոխությունների ի հայտ գալու հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական կորուստների:

Բանկի ռիսկերի կառավարման համակարգի բաղադրիչներն են՝

Ռազմավարությունը,
Մեթոդաբանությունը,
Վերահսկողությունը,

Արդյունավետության գնահատումը,

Արդիականացումը (անհրաժեշտության դեպքում):

Բանկային ռիսկերի կառավարում է համարվում Բանկի իրավասու մարմինների, ստորաբաժանումների կամ անձանց կողմից այնպիսի գործողությունների իրականացումը, որը հնարավորություն կընձեռի բանկային ռիսկերի առկայության և անորոշության պայմաններում ապահովել դրական ֆինանսական արդյունք:

ՌԿՀ-ն գործում է անընդհատության սկզբունքով՝ հաշվի առնելով ներքին և արտաքին միջավայրերի դինամիկ փոփոխությունները:

Բանկային ռիսկերի կառավարումն իրականացվում է ուղղահայաց եռաստիճան համակարգով՝

Ռազմավարական մակարդակ՝ ռիսկերի բացահայտում, ընդունելի ախորժակի, գործընթացների և սահմանաչափերի սահմանում,

Վերահսկողական/հսկողական մակարդակ՝ մոնիտորինգ, շեղումների վերլուծություն, գնահատում և համապատասխանեցում,

Մարտավարական մակարդակ՝ ռիսկերի ընթացիկ կառավարում թույլատրելի սահմանաչափերի միջակայքում (ռիսկ պարունակող գործարքների իրականացում):

Բանկային ռիսկերի կառավարման գործընթացի փուլերն են՝

Ռիսկերի բացահայտումը (սահմանումը), ներառյալ ռիսկի գործոնների վերլուծությունը (տարանջատումը),

Ռիսկերի գնահատման մեթոդների սահմանումը (ըստ տեսակների) և ռիսկերի գնահատումը (կանխատեսումը),

Ռիսկերի սահմանափակումը, այն է՝ դիվերսիֆիկացիայի սկզբունքների, ներքին սահմանաչափերի հաստատումը, ինչպես նաև համապատասխան ներքին իրավական ակտերի մշակումը և ընդունումը, որոնցում, մասնավորապես, ներառվում են բազմակի ստուգման, միևնույն գործընթացի իրականացումը տարբեր, միմյանց հետ չփոխկապակցված անձանց վրա դնելու և սխալների բացահայտման սկզբունքները:

Ռիսկերի գործնական կառավարումը, այն է՝ համապատասխան գործողությունների իրականացումը, իրավիճակային արձագանքումը (խուսափում, նվազեցում/հեջավորում, փոխանցում/ապահովագրություն, ռիսկի ընդունում և այլն),

Ռիսկերի մոնիտորինգը, վերլուծությունը, ընթացիկ (օպերատիվ) և պարբերական հաշվետվությունների/տեղեկատվության տրամադրումը ուղղահայաց և հորիզոնական կտրվածքներով,

Ռիսկերի կառավարման հետգործարքային վերահսկողությունը:

Յուրաքանչյուր ռիսկի տեսակի կառավարման գործընթացը (սահմանաչափերը, կառավարումը, վերահսկողությունը, հաշվետվությունները, պատասխանատուները և այլն) կարգավորվում է համապատասխան կարգերով, ընթացակարգերով: